Բազմանիշ թվի բազմապատկումը երկնիշ, եռանիշ և քառանիշ թվերով

Սիրելի սովորողներ նախ միասին վերհիշենք, թե ինչպես ենք բազմանիշ թիվը բազմապատկում միանիշ թվով՝

Օրինակ՝

	1			
.	6	4	3	
			3	
1	9	2	9	

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես բազմանիշ թիվը բազմապատկենք երկնիշ թվով:

Թիվը երկնիշ թվով՝ բազմապատկելիս սյունակաձև գրելու դեպքում նախ այն բազմապատկում ենք միավորով, արդյունքը գրում ենք գծից ներքև 1-ին տողում, ապա տասնավորով, որի արդյունքը գրում ենք երկրոդ տողում 1 նիշ խորքից, և արդյունքները գումարում ենք այնպես, ինչպես այս օրինակներում՝

	.	4	5	6	
			6	5	
+	2	2	8	0	
2	7	3	6		
2	9	6	4	0	

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես բազմանիշ թիվը բազմապատկենք եռանիշ թվով:

Թիվը եռանիշ թվով բազմապատկելիս սյունակաձև գրելու դեպքում նախ այն բազմապատկում ենք միավորով, արդյունքը գրում ենք գծից ներքև 1-ին տողում, ապա տասնավորով, որի արդյունքը գրում ենք երկրոդ տողում 1 նիշ խորքից, հետո հարյուրավորով, որի արդյունքը գրում ենք երրորդ տողում 2 նիշ խորքից և արդյունքները գումարում ենք այնպես, ինչպես օրինակում՝

Օրինակ՝

	.	5	4	6	2		
			1	2	3		
+	1	6	3	8	6		
1	0	9	2	4			
5	4	6	2				
6	7	1	8	2	6		

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես բազմանիշ թիվը բազմապատկենք քառանիշ թվով:

Թիվը քառանիշ թվով բազմապատկելիս սյունակաձև գրելու դեպքում նախ այն բազմապատկում ենք միավորով, արդյունքը գրում ենք գծից ներքև 1-ին տողում, ապա տասնավորով, որի արդյունքը գրում ենք երկրոդ տողում 1 նիշ խորքից, հետո հարյուրավորով, որի արդյունքը գրում ենք երրորդ տողում 2 նիշ խորքից, հետո հազարավորով, որի արդյունքը գրում ենք 4-րդ տողում 3 նիշ խորքից, և արդյունքները գումարում ենք այնպես, ինչպես օրինակում՝

Օրինակ՝

									.	5	4	6	2		
										2	1	2	3		
									1	6	3	8	6		
					+			1	0	9	2	4			
								5	4	6	2				
						1	0	9	2	4					
						1	1	5	9	5	8	2	6		

Առաջադրանքներ

1. Հաշվի՛ր արտահայտության արժեքը՝

3264·18

15024·29

32689·128

6234·108

3089·209

2508·230

2516·1234

1865·1023

16985·1024

28965·1005